Նոյն աղբիւրներուն համաձայն, (Շար. 19րդ էջ)

ԳԱՂՈՒԹԻ ԿԵԱՆՔԵՆ

«Յակոբ Օշականի Կեանքն Ու Գործը Դուրս Կը Մնան Մեր Հասկացողութենէն», ԸՍԱԻ ՎԱՀԷ ՕՏԱԿԱՆ


(Շար. Առաջին էջէն)

քին ու գործին (Հրաչ եւ Սեդա Մի-
մոնեան): Գրող եւ Հրատարակա-
գիր Արամ Գույումճեան ներկայա-
ցուց երկու տեսարան «Շահագ»
վիպակէն, իսկ «Գասպար Իփէկ-
եան» թատերախումբի նախկին


պատկաներ այդ Հասարակութեան:
«Սակայն ժամանակի փոփոխու-
թիւնը թելադրեց, որ նոյն այդ
Ամերիկայում, արդէն տարիներ
առաջ սկսած Հրատարակութիւն-
ներով, գիտաժողովներով, պաշտո-
նական կամ մտերմիկ հանդիպում-

սանն է», ըսաւ Պըլտեան, մատ-
նանշելով այն իրողութիւնը, թէ
մենք չենք կրնար բաղդատել Օշա-
կանի վիպասանի ազատութիւնը
ո՛չ Համաստեղին, ո՛չ Զօրեանին,
ո՛չ Բակունցին, ոչ Զարեանին, ոչ
նոյնիսկ Ռաֆֆին հետ: «Իրմէ


յին եզրն է: Օշականի վէպերէն
«Մնացորդաց»ը ունի, ինչպէս
գրողը կ'ըսէ, Համապատկերային
նկարագիր մը: Այսինքն ժամանա-
կաշրջանի մը պատկերը կը գծէ
Հատորի մը երկայնքին: Օշական
երբեք 18րդ դարու վիպագիրի
անուն չի տար մեզի, մինչդեռ
ամէն տեղ Պալզաքի անունը կը
յայտնուի: Ինք կ'առնէ Պալզաքի
նպատակը՝ գտնել Ֆրանսայի քա-
նորդ դարու պատմութիւնը: Աստ-
ուածային վիպասանը Տոստոյեւս-
կին 1870 թուականներուն ծրագ-
րած էր ամբողջ Ռուսիոյ Համա-
պատկերը նուաճել հինգ Հատոր-
ներու մէջ: Համապատկերային
նկարագիրը ընդհանուր նորոյթ
մըն էր այդ ժամանակին, եւ այդ
նորոյթին կը հանդիպինք Ֆրանս-
սահայ գրողներէն Շահնուրի եւ
Որբունիի մօտ:



Գրիգոր Պըլտեան



Վահէ Օշական



Մարկ Նշանեան

անդամներէն Գարմէն Տէր Կարա-
պետեան ընթերցեց «Մնացոր-
դաց»էն հատուած մը: Գեղար-
ուեստական յղացք՝ Գառնիկ Գա-
ղանճեանի: Բեմակայարարանք ու
գեղարուեստական յայտագիրը
կ'ընդգրկէին թէ՛ դասական եւ թէ՛
նորարարական տարրեր, երեւոյթ
մը որ աններդաշնակութիւն կը
ստեղծէր եւ տպաւորիչ էր:
Հանդիսավարը՝ էլիզապէթ Գրի-
գորեան, որ իր բացման խօսքը
կատարեց հիմնուելով ինքնաբեր-
նադատական էջերուն մէջ Օշակա-
նի ըրած այն յայտարարութեան
վրայ, թէ ինք չկարողացուեցաւ
Ամերիկայի մէջ, որովհետեւ չէր

ների ընթացքում կարդացուի Օշա-
կանը: Գրողը չէր պատկանում այդ
Հասարակութեան, ճիշդ է, բայց
անխուսափելիորէն այդ Հասարա-
կութիւնը պատկանում է Յակոբ
Օշականին», նշեց Գրիգորեան:
Բանաստեղծ եւ գրականագէտ
Գրիգոր Պըլտեան ներկայացուց
«Յակոբ Օշական 20րդ դարու վի-
պասանը»: Պըլտեան Փարիզի
Արեւելեան Լեզուներու Հիմնարկի
դասախօս է եւ գրաբար ու մատե-
նագրութիւն կը դասախօսէ Լիոնի
Կաթողիկէ աստուածաբանական
համալսարանէն ներս:
«Պէտք է ընդունինք, որ Օշական
20րդ դարու հայ մեծագոյն վիպա-

առաջ արեւմտահայ վէպ մը հազիւ
գոյութիւն ունի, եւ կրնանք ըսել,
որ իրմով արեւմտահայ վէպը կը
փակէ իր շրջանը»:
Ապա անդրադարձաւ այն յարա-
բերութիւններուն, որ Օշական ու-
նէր իր ժամանակի միջազգային
գրողներուն հետ (հիմնուելով
անոր նշմարներուն վրայ), իբրև
վարպետներ, որոնց նմանը չունի
ոչ մէկ հայ վիպասան:
Իր վարպետներն էին Պալզաք,
Սթէնտալ, Տոստոյեւսկի, Բրուստ,
Ճէյմս Ճոյս, որոնք կուզան տար-
բեր հորիզոններէ՝ Ֆրանսական,
ուսական, անգլիական գրակա-
նութիւններէն, եւ որոնց կանոնա-
ւոր կերպով կը հանդիպինք Օշա-
կանի վէպերուն մէջ, երբ կը խօսի
վէպի վերջին ընդլայնումներուն
մասին:

Երկրորդ՝ անկայուն ճարտա-
րարպետութիւնը: Վէպը Օշականի
համար կանոնաւոր ճարտարապե-
տութիւն մը չէ: Կը դատապարտէ
Ֆրանսական վէպը շատ կառուց-
ուած ըլլալուն համար: Վէպ Հաս-
կացողութիւնը իր մօտ առաձգա-
կան է, կանոնաւոր ձեւ մը չունի եւ
կրնայ ամէն տեսակի սեղմումի են-
թարկուիլ: Այս մէկը գտած է Տոս-
տոյեւսկիի եւ Ճոյսի մօտ:

Երրորդ՝ գործողութիւնը, որուն
գիտը գտաւ Բրուստի կամ Ճոյսի
մէջ: Ներքին գործողութիւնը Օշա-
կանի վէպերուն մէջ կ'երկարի եր-
կար էջերու վրայ՝ մասնաւանդ
«Մակ Պտուկ»ին մէջ, երբ Թովմա-
սիկը կը գարնէ ղուրը եւ կը սկսի
ներքին գործողութիւնը:
Շեղումը՝ յանկարծ ճամբայ մը կը
բացուի եւ կ'երկարի մինչեւ վերա-
դարձ դէպի նիւթ: Այստեղ եւս մեծ
եղած է Օշականի վրայ Բրուստի
ազդեցութիւնը, հաւատալով որ շե-
ղումներէ՝ փակագիծները, շատ
աւելի հետաքրքրական են քան վէ-
պին նիւթը: Այդ շեղումները ոճա-
յին հնարքներ չեն, այլ պատումը
խախտող տարրեր:

Օշական հետաքրքիր է միջազգա-
յին վիպագիրներու զանազան տե-
սակներով (փիլիսոփայական եւ
արկածախնդրական). անոր միտքը
չի սահմանափակուիր իր փոքր
ածուին մէջ, այլ կը տարածուի: Կը
քննադատէ Ֆլոպէրը, որ մկրատի
վիպասան մըն է:
Պըլտեան հաստատեց, թէ Օշա-
կան վէպը կը համարէ բաց դաշտ
մը, ուր պիտի արձանագրուի
կեանքը: Ան կը գիտակցի, թէ վէ-
պի աւանդութիւնը էպպէս
արեւմտեան աւանդութիւն մըն է
եւ իր վէպը կ'արձանագրէ
արեւմտեան աւանդութեան հունին
մէջ:
Իր խօսքի երկրորդ բաժնով Պըլտ-
եան անդրադարձաւ քանի մը կէ-
տերու, որոնց կը հանդիպինք վէ-
պի իր հինգ վարպետներուն մօտ:
Առաջինը՝ վէպի Համապատկերա-

Պըլտեան իր խօսքը եզրափակեց
ըսելով, թէ Օշականի համար վէ-
պը տեսակ մը սրբազան գործողու-
թիւն է. ան յաջողեցաւ մեր վէպը
բանալ դէպի իր դարը:
Մարկ Նշանեան, որ ներկայիս կը
վարէ Նիւ Եորքի Գոյումպիա հա-
մալսարանի Արեւելեան Լեզուներու
Հայկական Ամբիոնը եւ կազ-
մած է լիակատար մատենագիտու-
թիւնը Յակոբ Օշականի, խօսեցաւ
«Յակոբ Օշական, ինչպէ՞ս սկսիլ»
նիւթին մասին:
Նշանեան հարցը տուաւ. ուրկէ՞
սկսիլ կարդալ Օշականի գործը՝
«Նոնարհներ»է՞ն, «Մնացոր-
դաց»է՞ն, «101 Տարուան»է՞ն,
«Մակ Պտուկ»է՞ն, «Մայրիներու
Շուքին Տակ»է՞ն, «Համապատկեր»
կոթողային գործէ՞ն: Եւ այս ձեւով
Համապատկերը գծեց անոր գրա-
կան գործերուն:
«Ոչ միայն չունինք մինչեւ այսօր

USA & CANADA



1999

**ԱՅԿԱԿԱՆ
Ե Լ Լ Օ Փ Է Յ Ձ**

ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ
ԸՆԴԱՐՁԱԿ ՀԵՌԱՆՈՍԱՅԱՆԿ

**ՇՏԱՊԷՔ
ՉԵՏԵՂԵԼՈՒ ՉԵՐ
ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐԸ**

**ARMENIAN YELLOW PAGES
& ALMANAC**

(818) 504-2550

Hamo Vassilian, Editor. 9th Edition



La Petite France

International French Bakery & Fine Pastries

Կ'ընդունինք եւ կ'առաքենք մեծաքանակ ապսպրանք՝
ճաշարաններու, վաճառարուներու եւ հաւաքոյթներու համար

(626) 445-0392

411 E. Huntington Dr. #101, Arcadia, CA 91006

ԳԱՂՈՒԹԻ ԿԵԱՆՔԷՆ

«Յակոբ Օշականի Կեանքն Ու Գործը Դուրս Կը Մնան Մեր Հասկացողութեան», ԸՍԱԻ ՎԱՀԷ ՕՏԱԿԱՆ



Լիկապէթ Գրիգորեան

ընդհանուր որեւէ փորձ օշական-
եան գործի մեկնարանութեան,
բայց չունինք մինչեւ իսկ կարելի
հասկացողութեան մը սկզբնաւո-
րութիւնը»:

Օշականի մասին գրողներէն լա-
ւագոյնը համարեց փարիզարնակ
Մկրտիչ Պարսամեանը, որ գոնէ
կարդացած էր ու կը պատմէր վէ-
պերը:

Նշանեան հարց տուաւ, թէ Օշա-
կանի խօսքը յիսուն տարի վերջ
պիտի հասկցուէ՞ր, եւ մատնանշեց
այն իրողութիւնը, որ Օշական իր
գրականութեան թէ՛ մա դարձուցած
է սկսելու դժուարութիւնը: Եւ այս
իսկ մեկնակէտով բացատրեց, թէ
Օշական միշտ վերամշակած ու
ճոխացուցած է իր գրածը:

«Կեանքիս Մէջ» ինքնակենսագ-
րական վէպին վրայ կեդրոնանա-
լով՝ որոշ բացատրութիւններ
տուաւ Օշականի գրելաձեւին մա-
սին, ուր ան առաջնահերթ կարե-
ւորութիւն տուած է հէքեաթնե-
րուն:

Նշանեան եզրակացուց, թէ Օշա-
կան իր վէպը կը սկսի հէքեաթով:
Սկսիլը հէքեաթէն դէպի վէպ անց-
նելու հարցն է, որ Օշականի
գրականութեան մեծ հարցը եղած
է:

Վերջին խօսք առնողը Վահէ Օշա-
կան, իր հօր մուտքը մեր գրակա-
նութեան մէջ համեմատեց գերբը-
նական երեւոյթի հետ, որ կատա-
րեց առաջին արհեստավարժ քայ-
լը արեւմտահայ գրականութեան
մէջ: «Իր ծլարձակումի առաջին
նշանները քսաներորդ դարու
դարձուածքին, շրջանն է նաեւ
արեւմտահայ գրական զգայարան-
քին ընդդատակեան խմորումնե-
րուն, իրրեւ արդիւնք արտաքին
ազդակներու՝ թրքական ճնշում,
Եւրոպական մշակոյթի ազդեցու-
թիւն:

«1900-1910 արեւմտահայ գրա-
կանութեան մեծանուն անուննե-
րէն կարելոր թիւ մը իր առաջին
յայտնութիւնը կ'ընէ՝ Թէքէեան,
Սիամանթօ, Մեծարեան, Ինտրա,
Վարուժան, Եսայեան, Արփիար-
եան, Զոպանեան եւ Օշական»,
ըսաւ րանխօսը:

Օշականի պարագային շատ
դժուար համարեց զանազանել
մարդը իր գործէն, այն իմաստով
որ վիպային հերոսներուն ու իր
միջեւ չկայ հեռաւորութիւն: Օշա-
կան իր կեանքը ապրեցաւ իրրեւ
վիպային հերոս մը, ապրելով
անոնց բոլոր իմացական ու զգա-
ցական փորձառութիւնները եւ այդ
հանգոյցը համարեց անոր գործին:



Գարմէն Տէր Կարապետեան

Իր անձնական փորձառութեան
մեկնելով՝ Վահէն պատմեց իր հօր
վիպային հերոսի նկարագրին մա-

սի. հաստատեց, թէ՛ «Իր գործը կը
տանի դէպի խախտում բանի մը,
որ կեանքի ընթացիկ կազմակեր-
պութիւնն է, նախադասութիւննե-
րու շարքն է, բառերու առողջու-
թիւնն է: Կեանքը, որ պիտի ապ-
րէր փոխադրած է իր գործին մէջ:
Այս է որ իր գործին կու տայ ներ-
քին թափը, հերոսներուն կու տայ
իրենց իրաւութիւնը, եւ հեղինա-
կին՝ իրականութիւնը, ոճին ինք-
նատպութիւնը»:


Որդին հօր մասին վկայեց իրրեւ
մարդ մը, որ կրնար քսան տարե-
կանին ծրագրել իր կեանքը: Իր
գործերը կը գրէր մտքին մէջ,
մինչեւ յետին մանրամասնու-
թիւնը: Մեծագոյն ցաւը եղած է
այն, որ մտքին արգանդէն պիտի
չկարենայ աշխարհ բերել ամէն
ինչ որ հոն պատրաստ կը սպա-
սէ:

Օշական իր հօր մեծութիւնը կը
գտնէ անոր վէպին մէջ, շատ մը
կողմերէ խոցելի ըլլալով հանդերձ,

եւ իր խօսքը եզրափակելով ըսաւ,
թէ կարելի է հատորներ գրել անոր
գրականութեան մասին, որ հսկա-
յական, քառասյին աշխարհ մըն է
եւ թէ անոր անձն ու գործը դուրս
կը մնան մեր հասկացողութեան:
Եւ որքան տարիները բարդուին
անոր մահուան թուականին վրայ,
այնքան պիտի բարդանայ այդ աշ-
խարհին ճանաչումը:

Յիշենք, թէ այս առիթով հրատա-
րակուած էր Օշականի կեանքն ու
գործը ներկայացնող գրքոյկ, որ
բաշխուեցաւ ներկաներուն:

Հոս անհրաժեշտ է նշել, թէ Հինգ-
շաբթի, Նոյեմբեր 12ին, «Ֆերահ-
եան» ազգ. վարժարանի կազմա-
կերպութեամբ եւ հովանաւորու-
թեամբ Թեմի առաջնորդ Մուշեղ
եպս. Մարտիրոսեանի, կատար-
ուեցաւ Յակոբ Օշականի եւ Աւե-
տիս Ահարոնեանի մահուան 50ամ-
եակին նուիրուած յուշ-երեւելոյ:
Այդ օր Յակոբ Օշականը ներկայա-
ցուց Զարեհ Մելքոնեան:



Հայաստանի
Երաժշտահաններու
Միութեան
Նախագահ
ՌՈՊԵՐԹ
ԱՄԻՐԻԽԱՆԵԱՆԻ
Երաժշտական
Գործունէութեան
35րդ Տարեդարձի
Տօնակատարութիւն

Կիրակի, 13 Դեկտեմբեր 1998
Երեկոյեան Ժամը 6ին
Alex Theatre, 216 N. Brand Blvd., Glendale

- Կը ներկայացուին Ռոպերթ Ամիրխանեանի անդամագործութիւնները՝ երկու արհեստավարժ եւ մէկ մանկական երգչախումբերու հետ միասին
- Նուագախումբ՝ ղեկավարութեամբ՝ Ռոպերթ Ամիրխանեանի
- Երեկոն կը հովանաւորեն Լոս Անճելըսի Իրանահայ Միութիւնն ու խումբ մը արուեստաւէրներ (անուանացանկը տեսել ստորեւ)
- Եթէ կը փափաքիք այս ձեռնարկը հովանաւորել, ձեր նուիրատուութիւնը տուրքէ զերծ է. առաւել, կը ստանաք՝
- Ամբողջ էջ մը երեկոյի գովազդներու գրքոյկին մէջ
- Զեր նուիրատուութեան համապատասխան ձեռնարկի տոմսեր
- Զեր անունը կ'աւելցայ նուիրատուներու ցանկին, որ մինչեւ ձեռնարկի թուականը կը յայտարարուի բոլոր գովազդներուն մէջ

Մանրամասն տեղեկութեանց համար հեռաձայնել (818) 662-9222

- Robert Amirkhanian Concert Sponsors**
- Armenian Society of Los Angeles
 - ABC 2000 Auto
 - International Motors
 - Remedy Drugs
 - Bixel Financial
 - Hi Star Auto Sales
 - Hamlet & Son, Inc.
 - Gegham Ardashi
 - Stepanian Insurance
 - Dr. Hrach Yadegarian
 - First Eagle Insurance
 - Garnik Derohanian of Pizza Man
 - Andranik Hairapetian
 - Dr. Edith Gevorkian
 - Moon Mart Kebab
 - Misak & Dr. Maro Oktanyan
 - Glen West Realty
 - Advance Auto Repair
 - Levon Yulian of Farmers Insurance
 - Honey Bee Flowers
 - Rima Abedi, C.P.A.
 - People's Taxi
 - Homenetmen Sepsan
 - Homenetmen Ararat
 - Arthur Mangassarian of Re/Max
 - Dr. Robert Mokhtarian
 - Varouzh Abramian
 - RB Repair
 - Razmik Haroutunian
 - Vahe Terpanchian
 - Spectrum Bank
 - Daragon Insurance
 - Pioneer Chicken
 - Shahen Harutunian
 - Dr. Scott Adishian
 - Shushi Music School, Republic of Karabakh
 - Hacop Baghdassarian
 - Dr. Ighia Aintablian
 - Mediterranean Enterprises
 - Broadway Family Medical Clinic, Dr. Noubar Janoian
 - Lark Musical Society
 - Airway Body Shop
 - Vahik Markarian of U.S. Blinds
 - Glendale Studios
 - Edward Ohanessian
 - Armen Janian, Attorney at Law
 - Vrej Agajanian
 - Tomik Alexanian
 - Seroje Keshishian of Farmers
 - Joe's Meat Market
 - Jora & Helen Manoocherian
 - Jerry's Sound
 - Diana's Gourmet Catering
 - Dr. Beno Nersessian
 - Armine Adjarian Insurance Services
 - Dennis Wilson, Attorney at Law
 - Master Tech
 - Pak Dairy, Inc.
 - 1st Broadway Financial
 - Jilbert Tahmazian, Attorney at Law
 - Ashot Azarian and his band
 - Khoren and Anjick Moradi of New York Life Insurance
 - Varouj & Rosik Baghrmian
 - Central Avenue Pharmacy
 - Raffi's Place
 - Vachik Stepanian of Fred Sands
 - Shahen & Aida Nazarian
 - Arax Music School
 - Ararat Petrossian
 - Ruggie's Hallmark
 - Dr. Ludvik Artinyan
 - Toyota of Glendale
 - Royal Paging
 - Massis Amadian
 - Zarik Menassian
 - Varoujan & Shoghik Titizian
 - Nelson Honda

Սկսել 100 տարի առաջ, Պոլսէն չորս ժամ հեռու գտնուող Պուրսա քաղաքին մէջ, գետնափոր նկուղի մը մէջ կը ծնէր Յակոբ Օշական, ծայր աստիճան աղքատ, հողագուրկ գիւղացի ընտանիքի մը զաւակը: 4 տարեկանին հայրը կը մեռնէր: Մայրը մետաքսի գործարանի մէջ օրական 12 ժամ աշխատող գործաւոր է ու Յակոբ կը յանձնուի կոյր մեծմօր խնամքին:

17 տարեկանին ուսուցիչ է իր գիւղի, Սէօլէօզի վարժարանը: Օր մը իր մէկ գրութիւնը իր աշակերտները իրմէ գաղտնի Պոլիս կը ղրկեն: Ու երբ պատմուածքը, Առաջին Կիրցունք լոյս կը տեսնէ «Արեւելքի» մէջ գայթակղութիւնն է կը պայթի: Գիւղին աղաներով գայրոյթը սահման չունի: Օշական գործէ կը հանուի:

Ինչ էր Առաջին Կիրցունքին մեղքը: Պարզապէս այն որ կը նկարագրէր կատարեալ անկեղծութեամբ մարդ մը որ իր ամբողջ կեանքը ուզած էր ամուսանանալ բայց չէր համարձակած մթտենալ գիւղի որեւէ աղջկայ ծնողքին որովհետեւ իր մայրը դէմ էր գիւղէն աղջիկ առնելու: «Տղաս, կ'ըսէր մայրը, ես քեզի Պուրսայէն աղջիկ կ'առնեմ, դուն հոգ մի ըներ, ուզածդ աղջիկ թող ըլլայ...» Ու հիմա, հասած է ծերութեան դռներուն, չորցած, անպտուղ, անսէր ու անկին մարդ մը որ հազիւ կրնայ լալ...: Դժբախտութիւնը այն էր որ Օշական իր պատմութիւնը կառուցած էր իրենց գիւղի աղաներէն մէկուն կեանքին շուրջ ու տուած իրականութիւնը իր ամբողջ մերկութեամբ:

շեշտ

Այս չնչին միջադէպը Օշականի գրական դիմագծին մէկ կարեւոր ~~է~~ կը պարունակէ: Առաջին Կիրցունքէն ետք Օշական 40 հատոր գործ պիտի արտադրէ բայց այդ ամբողջ զանգուածէն ՈԶ ՄԵԿ ՏՈՂ կարելի է գտնել որ չգար կեանքի իրականութենէն, ապրուած, շիղերով, ոսկորներով զգացուած եւ զգայարաններով իւրացուած մարդկային ցաւի, մեղքի, վայելքի ու սարսափի ապրումներէն չգար: Եւ այս իրականութիւնը ժամանցի, մանր մոլութիւններու եւ կամ չնչին յանցանքներու, մելոտրամաթիք պահերու կտու մը չէ այլ եղած է միշտ ծանր, ճղբերգական պաստառը կեանքին, հասնելու ոճիրին ու աններելի յանցանքներուն, խառնուած սեռային յագեցուած կամ չյագեցուած ախորժակներուն: Կեանք ըսելով Օշական յիշք, արիւն ու բնագոյն կը հասկնայ, դաժան օրէնքին տակ բնութեան: Եւ վերջապէս, իրար ցանկացող, զիրար հալածող եւ ատելութեամբ կամ սէրով

գիրար բզկտող այդ մարդիկը որ կը լեցնեն իր 40 հատորները, այդ մարդիկը հայ ժողովուրդն են, հայուն ժամանակակից պատմութիւնն է որ կ'արին, հայուն տառապանքն է որ կը ներկայացուի եւ անշուշտ, հայուն հետ անքակտելիօրէն միացած թուրքին կեանքը: Ինքը կ'ըսէ ' ' իմ գրականութիւնս կեանքի հսկայական ժայթքում մըն է , ջրվէժներու ապարդիւն գեղեցկութեամբ ' ':

Ետ գալով կեանքին, Օշականին 17 տարեկանին ու գործէն վնասուելուն, որ կարծէք իր ամբողջ գրական կեանքին ճակատագիրը կնքած էր այդ պահուն որովհետեւ մինչեւ մահուան տարին, մօտ կէս դար ամբողջ, Օշականի թէ անձը եւ թէ ալ գրականութիւնը ենթարկուեցան հալածանքի, անտեսումի, անհասկացողութեան, առնուազն զրպարտութեան: Հալածանքը անշուշտ նախ թուրքէն, ինչ որ բնական է, բայց նաեւ Հայերէն, մանաւանդ անոնցմէ որոնք ամենէն շատ պատճառ ունէին երախտապարտ ըլլալու իրեն -- աշակերտ ու պաշտօնակից, ^{բայց նաեւ} Բրախտախնդիր ու քաղաքական հակառակորդ: Մինչեւ որ իր անձին ու գրականութեան շուրջ ստեղծուեցաւ ^{ժխտական} հէքեաթը խոժոռ, անհանդուրժող, կոշտ ու դաժան մարդուն, հէքեաթը անհասկնալի, խրթին, անժողովրդական գրագէտին: Մինչ իրականութիւնը ճիշդ հակառակն էր: Օշական մինչեւ մահը պարզ, միամիտ ու ծայր աստիճան համեստ գիւղացի մը մնաց որ ամէն տեսակ մարդու հետ կը հաղորդակցէր, Արաբ գիւղացիէն որուն հետ տամա կը խաղար նստած գիւղին հրապարակը մինչեւ Պատրիարք ու Կաթողիկոս որոնք կ'ընդունէր իր սենեակը, գիշերանոցով...:

Սակայն սկսինք սկիզբէն: ' ' Քսան տարեկան չմտած, կ'ըսէ Օշական իր ինքնակենսագրական հսկայ հատորին մէջ «Ես մտքիս մէջ ուրուագիծը ունէի իմ կեանքի ամբողջ գործին»: Տարօրինակ յայտարարութիւն, եթէ նկատի առնենք որ 1902-ին ոչ Զարգերը ինկած էին մեր գլխուն ոչ ալ Ափիւնքը գոյութիւն ունէր տակաւին եւ սակայն Օշական չէ շեղած իր ծրագրէն -- նուաճել վիպակով թէ վէպով, քննադատութեամբ թէ թատերական գործերով, տպաւորապաշտ էջերով իր ժողովուրդին հսկայ տառապանքն ու հեշտանքը, գրականութեան վերածել հայութեան պատմական իմաստութիւնը, արտայայտել հայ ժողովուրդին խորագոյն ապրումները որովհետեւ իրեն համար Հայութեան փորձառութիւնը եզակի ու սիրտ առնող, եղբրական ու նաեւ առաքինի արժանիքներ ունէր որոնք չկային որեւէ այլ ազգի մօտ:

Ամէն պարագայի, 20 տարեկանին, կեանքով լեցուն, վստահ իր տոկուն տաղանդի

մասին, Եւրոպական գրականութեան մեծերուն գործերը կլլած ու հմտացած Օշական
 արդէն այնքան մի հասունցած է որ ~~այսինքն~~ կ'ազնայարհէ համբաւն ու ժողովրդականութեանը,
 աղմուկն ու փոշին: Ոչ մէկ աճապարանք կայ իր մօտ տեղ մը հասնելու, անուն
 շինելու: Դէմ է ամէն ընդունուած օրէնքի կամ սովորութեան, կ'արհամարհէ դրամն ու
 իշխանութիւնը, ^{չոր} հմտութիւնն ու շաւլ զգացականութիւնը: Իր ժամանակը կ'անցընէ
 երկու հիմնական գրադումներով -- ընթերցումը աշխարհի կարեւոր գրութիւններուն
 վէպ ու բանաստեղծութիւն, եւ գրել գրել առանց հրատարակելու, երեւնալու, փայ-
 լելու այլ պարզապէս կատարելագործելու իր ոճը, յղկելու իր ~~թեքնիքը~~ թեքնիքը: --
 •• Ու նուազն 15 տարի աշկերտութիւն պիտի ընէ գրագէտ մը մինչեւ որ հասկնայ թէ
 գրիչին ո՞ր ծայրը կը գործածուի գրելու համար... •• -- այս է իր խրատը նորեկուկ
 գրողներու: Ինքը 14 տարի դրած է, 1900էն մինչեւ 1914:

Օշական կը գրէ նաեւ բանաստեղծութիւն, ինչպէս պէտք է ընէ որեւէ երիտասարդ
 որ որոշած է կեանքը գրականութեան նուիրել: ^{Բացարձակ, կատարեալ նուիրում արուեստի} Աման այն երիտասարդներուն որոնք
 կանուխէն ~~գծծծ~~ դպրեվանք կը մտնեն մի անգամ ընդ միշտ մտադրած ըլլալով իրենց
 կեանքը եկեղեցւոյ ու կրօնի ծառայութեան նուիրել: Այդ է Օշականի որոշումը:
 Բանաստեղծութիւնները չի տպեր, հակառակ որ անոնց որակը զգալիօրէն բարձր է օր-
 ուայ միջինէն: Պարզ է պատճառը -- շատ լաւ գիտէ որ ինք բանաստեղծ չէ ծնած, այլ
 արձակագիր, վիպասան, աւելի ճիշդ ըլլալու համար: Սակայն դեռ շատ կանուխ է վէպ
 գրելու համար որովհետեւ ատիկա փորձառութեան, հասունութեան կը կարօտի եւ ինք
 տակաւին 20 տարու է: Հրապարակին վրայ սակայն մէկ սեռ կայ զոր ամէն գրող պարապ
 ժամերուն կը փորձէ -- պատմուածքը:

Օշականի կեանքի մեծ ծրագրին առաջին շրջանը կը բացուի: Ու մինչեւ 1915
 իր ուժը կու տայ վիպակ, պատմուածք ու հէքեաթ գրելու, իր ամբողջ ներշնչումը
 առնելով գիւղի կեանքէն ու գիւղացիներու տիպարներէն. որոնք ափին պէս լաւ կը
 ճանչնայ: Քսանի չափ կը գրէ սակայն նորէն կը մերժէ հրատարակել, հակառակ որ,
 ինչպէս բանաստեղծութեան պարագային, հիմա ալ հրապարակի լաւագոյն գրողն է, ամեն-
 էն ինքնատիպը, յանդուգնը: Ու գրչին տակ կեանքի կուգան հայ գիւղի գունագեղ,
 զարտուղի, տառապալի ու յաճախ եղբրական մարդիկը որոնց տակաւին ոչ մէկ գրող
 ատիւը ըրած էր գրականութեան մէջ մտցնելու: Ձկնորսներ, մենակեաց հովիւներ,

համբաւ մը ապահոված է: Իրականութեան մէջ, Օշականի համար քննադատութիւնը գրական սեռ չէ բնաւ, գրականութեան չի պատկանիր ու քննադատը մակաբոյծ մըն է ^{լոկ:} ~~է~~ մէկ տեսն, կը գրէ Օշական որեւէ քննադատէ բան մը սորված եմ»: Գիտէ որ ժամավաճառութիւն է սակայն կ'ընէ զայն որպէս հանրային ծառայութիւն, հրապարակը անտաղանդ գրողներէ մաքրելու համար, առանց հաճոյքի կամ օգուտի, որպէս ազգային պարտականութիւն: Իսկ հոն ուր իր դատումները դրական երեւոյթներով կը զբաղին՝ հոն Օշական պատրուակ կը բռնէ հեղինակը՝ ըսելու եւ ստեղծելու բաներ որոնք աւելի կարեւոր են քան քննուած նիւթը: Օշական քննադատը մաս կը կազմէ իր առասպելին:

Բայց լուրջ հարց է, քննադատութիւնը, ժխտական զգացումներով սնանող ժողովուրդի մը համար ինչպիսին են հայերը: Երգիծանքի մօտեցող ու անոր նման նուաստացած ժողովուրդի մը ժխտականութեան գոհացում տուող քննադատութիւնը, ու մեծ քննադատի համբաւը զոր կը շահի լաւագոյն ձեւն է որ կը գտնեն մարդիկ չեզոքացնելու յեղափոխական գրագէտին ազդեցութիւնը: Հեզնանքի ձեւ մը: Իրականութեան մէջ, ոչ ոք իրմէ առաջ քննադատութիւն ըրած էր նոյն հմտութեամբ ու ինքնատպուլթեամբ: Եղած էին քանի մը քննադատներ-- Սրտաշէտ Յարութիւնեան, Սրժակ Զօպանեան, Սրփիար Սրփիարեան Ստեփան Ոսկան, սակայն անոնց գրածները շատ բան չէին փոխած Պոլսահայ գրական ճաշակներէն: Օշականով քննադատութիւնը յանկարծ կը լըջանար ու իր հետ կը լըջանար հայ գրականութիւնը:

1915:

Սպրիլ 24-ի երեկոն անծանօթ մը կ'այցելէ Օշականի տունը Պոլիս ու կը փսփսայ -- այս գիշեր տունդ մի մնար: Օշական, նախապաշարումներու մարդ՝ գլուխը կ'առնէ կը կորսուի մայրաքաղաքի մթին անկիւնները: Ու երեք տարի անընդհատ փախստականի կեանք մը կը վարէ, լուսանկարը ամէն ոստիկանի ձեռքը, նկուղներու, կամուրջներու գոհհներու մէջ ապաստանած: Ութ անգամ կը բռնուի, ութ անգամ կը փախի: Ի վերջոյ ծպտուած որպէս գերման սպայ Պուլկարիա կ'ապաստանի: Թշուառ, անօգնական կեանք մըն է հիմա, անծանօթ միջավայրի մէջ ու շրջապատուած որբերու զանգուածներով որոնք լեզի դառնութեամբ լեցուած են մարդոց ու աշխարհի դէմ: Մյս պայմաններուն մէջ էր որ կը սկսէր իր կեանքի երրորդ շրջանը, Սփիւռքը, Օտարութիւնը:

նոր կեանքի սեմին, անհրաժեշտ էր որ Օշական փակէր հինին հաշիւը: Ու 6 տարուայ մէջ կը հրատարակէ իր վիպակները, հէքեաթները -- Խոնարհները 1915 կը տեսնէ 1920-ին, Խորհուրդներու Մեհեանը 1922-ին ու Երբ պատանի են 1926-ին: Երազային գիւղը իր գունագեղ քոքուռներով, իր կախարդական բայց դաժան կեանքով անցեալին կը պատկանի ու շատ պզտիկ կու գայ իր տաղանդին: Աւելի մեծ պատանուի պէտք ունի, Պալգաթ, Բրուսթ ու մանաւանդ Տոսթոյեվսքի ճանչնալէ ետք: Պուլիսը պէտք է նուաճուի, Թիֆլիսը ու մեծ քաղաքի հոգեբանութիւնը, գիւղի բնակչութենէն աւելի հայութիւնը ամբողջ: Ու կեանքն ալ աստանդական փնտռտուք մըն է մնայուն կայքի մը: 1924-ին Եգիպտոս, 1926-ին Կիպրոս, 1934-ին Երուսաղէմ, միշտ ուսուցիչ հայերէն լեզուի ու գրականութեան: Մինչեւ որ կը գտնէ իր կեանքին բուն արմատը, միակ խորիստը իր գրականութեան -- վէպը:

Ամէն բանէ առաջ ու ամէն բանէ վերջ Օշական վիպասան է: Արեւմտահայոց մէջ մինչեւ 1920ական թուականներու վերջը, ուրեմն մօտ 100 տարի, վէպ ըսելով մարդիկ կը հասկնային հետաքրքրաշարժ, յուզիչ ու կրթիչ պատմութիւն: Հաճելի եւ օգտակար ժամանց: Ու չկար զուտ գրագէտի, վիպասանի յղացք, մարդը որ իր արուեստին ստրուկն է, արհեստաւորն է ու կեանքին իմաստը, արժէքը գրուած բառին մէջ կ'իրականացնէ փոխանակ սեփականութեան, զրամի կամ պարզ ապրելու մէջ: Արեւմտահայերու մէջ բանաստեղծութիւնը եղած էր տիրական սեռը, մինչ Արեւելահայերու մօտ արձակն էր: Այնպէս որ հակառակ որ 1845էն մինչեւ 1928 Արեւմտահայերը 95 վիպասան ունեցեր էին ու մօտ 150 վէպ հրատարակուած էր, տանելին ու անտանելին միասին ^{հայ} Վէպը երբեք ժողովրդականութիւն չէր ունեցած: Ստոր փոխարէն սակայն օտար վէպերու համաճարակ մը բռնած էր մեզ ու ազգային վէպի ծագումը արգիլող պատճառներէն մէկ կը հանդիսանար: Հետեւանքը այն եղաւ որ 1845էն մինչեւ 1928 Արեւմտահայերը Եւրոպական երկրորդ ^{Մնգլերէն, Ֆրանսերէն Գերմաներէն} երրորդ կարգի մօտ 350 անուն Ագիթթ թարգմանած էին ու ողողած հրապարակը...: Այս հեղեղին դէմ որպէս զուտ ազգային գրականութիւն մենք ունէինք 3 վէպ (եթէ զանց առնենք Մատթէոս Մամուրեանի ու Ծերենցի պատմական վէպերը որոնք քաղաքական նպատակներու համար գրուած էին) -- Տիգրան Կամսարականի Վարժապետին Աղջիկը, Երուստանի Ամիրային Աղջիկը ու Զապէլ Եսայեանի Սիլի հտարի Պարտէզները:

Այսպէս, Օշականէն առաջ չկար ոչ վէպի ոգ ալ ազգային գրականութեան աւանդ

դուրսիւն մը: 1928-ին, Մեծ Զարդերը եկած զացած էին, համատարած էր մարդկային
 ողբերգութիւնը ու հաւանաբար միայն հայ ըլլալու զգացումն էր որ Ազօրացած էր քան
 առաջ, սակայն ստոր հետ միասին մահն ու բարոյալքումը քանդած էին մշակութային
 ամէն կառոյց: Կենաց մահու պայքարին մէջ որ ազգովին կը մղէինք՝ որով հոգը արուեստ-
 տը, գրականութիւնը ու վէպը...:

Պատասխանը պարզ է -- միայն գրագէտին հոգն է: Ու ահա քոյրքայուած ազգի մը
 ու գրեթէ անգոյ անանդութեան մը մէջէն՝ Օշական կը կանգնեցնէ իր վէպը: Գրեթէ ոչինչ-
 չէն՝ ոտքի կը հանէ ոչ միայն բարձր մշակոյթներու շափանիշներով վէպ՝ այլ եւ հայ
 վէպ ու ազգային գրականութիւն, հայ ազգային վէպը: "Օշական չի յաւակնիր, կ'ըսէ
 ան իր ինքնակենսագրութեան մէջ," որ մեր վէպին տուած է վերջին կերպարանք: Բայց կը
 յաւակնի որ մեր վէպը իրմով շրջան կը փոխէ, այսինքն՝ կը փորձէ նոր, յանդուգն ճար-
 տարապետութիւն մը (էջ 189) Ուժով, ամուր վէպն է, կիրքերու հանդէս մը... յաւելում
 մը եթէ ոչ աշխարհի գրականութեան՝ գէթ Հայ գրականութեան վրայ" (էջ 218)

1928ին Օշական 45 տարեկան է ու կը գտնուի իր ստեղծագործական կարողութեանց
 գագաթնակէտին: Ու հակառակ ծանր դժուարութիւններուն -- իր սերունդն ու ծանօթները
 թէքէեանէն, Եսայեանէն ու Զարեանէն զատ բոլորն ալ ջարդերուն զոհ գացած են, երի-
 տասարդ սերունդը, Փարիզ ու Միջին Արեւելք մեծ մասով կ'ուրանայ զինքը, ժողովուրդը
 գլուխ չունի լուրջ գրականութիւն կարգալու, գիրքերը չեն ծախուիր, հազիւ հազօրաֆ
 պահիկը կը շահի -- ան հինգ տարուայ ընթացքին 10 հատոր ծանր, բարդ ու երկար
 վէպեր կը գրէ ու կը հրատարակէ Հայրենիքի եւ Յուսաբերի մէջ: 1928ին՝ ՄԱԿ ՊՏՈՒԿԸ,
 1930 էն 1934՝ ՄՆՈՑՈՐՊԱՑ-ը երկու հատոր հինգ գիրք, 1933-ին՝ ՀԱՃԻ ՄՈՒՐԱՏ, ՀԱՃԻ
ԱՊՏՈՒԼԼՈՂ եւ ՄԻԻԼԵՅՄԱՆ ԷՖԷՆՏԻ, ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ եւ ՄԱԹԻԿ ՄԵԼԻՔԻԱՆԵԱՆՑ (այս
 երկու վերջինները՝ անտիպ) Իրական հեղեղ մըն է...:

Կարելի չէ այս վէպերը մէկ մէկ քննել: Իւրաքանչիւրը իր իւրայատուկ դիմագիծը
 եւ աշխարհը ունի: Սակայն բոլորն ալ ստեղծագործական մէկ կաղապարէ թափուած են:
 Օշականի արուեստը կը մտնէ մարդոց հոգեբանութեան խորքերը ու կը բռնէ կիրքը, ապրեք
 լու կատաղութիւնը եւ արեան, սեռականութեան, ժառանգականութեան, սիրոյ ու վրէժի,
 ճակատագրի ու մոլուցքի հսկայ ցանցը որուն մէջ ինկած անոնք կը տառապին, կը սիրեն
 ու իրենց մահուան կը դիմեն: Ուժեղ, տոկուն, ինքնատիպ ոճով: Ամբողջ հայ ժողովուր-

դին կեանքն է որ կը նուաճուի այս վէպերով, 1890էն 1915ի հայ գաւառը իր ասպատակ-
 ներով, ողբերգական հարսերով ու հերոսային մաքսանենգներով, իր իմաստուն ու դաժան
 պառաւներով, հայ գիւղացիութիւնը իր հազարմեայ ահաւական նախապաշարումներով,
 քաղաքները իրենց թուրք փաշաներով, մոլլաներով ու կինեթով, թրքութիւնը իր ահաւոր
 վայրագութեամբ ու մոլեռանդութեամբ, հայ յեղափոխութիւնը իր հերոսներով ու կովկասցի
 գործիչներով: Մնացորդացի երրորդ ու վերջին հատորը պիտի կոչուէր "Դժոխք" ու կը
 հասկնաք թէ ինչ պիտի ըլլար անոր նիւթը: 15 տարի Օշական ձգձգեց այդ երրորդ հատորի
 գրութիւնը, գայն իր ուժերէն վեր նկատելով: Ի վերջոյ 1948-ին, ամէն բան աչքը առած
 գնաց Հալէպ ուրկէ Տէր Զօր պիտի անցնէր շարդերուն վայրը իր աչքերովը տեսնելու:
 Սակայն անձկութիւնը այնքան ուժգին էր որ մեկնումին նախորդ գիշերը սրտի կաթուած
 մը տապալեց զինքը:

Սակայն չմեռած Օշականի ծրագիրը մէկ վերջին արար ունէր: Քսան տարեկանին
 ան որոշեր էր որ Հայ Գրականութեան պատմութիւնը պիտի գրէր, 10 հատորով: Ու 50
 տարեկանին լծուեցաւ այդ հսկայական գործին: Այսօր, շնորհիւ Երուսաղէմի Սրբ. Յա-
 կոփայ վանքին, Համագգային Մշակութային Միութեան ու Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
 Օշականի ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ գործը, 10 հատոր, 3500 մեծագիր
 էջերով, մէկ միլիոն բառէ աւելի կը յաւերժացնէ թէ հայ գրականութիւնը եւ թէ ալ հե-
 ղինակին անունը: Մեր գիտցած պատմութիւնը չէ ասիկա, այնպէս ինչպէս կը գրուի Մի-
 թարեաններու կամ Խորհրդահայ պատմաբաններու կողմէ: Օշական բանասէր չէ բառին նեղ
 իմաստով: Ինք գրողները, իրենց գործերը, պատմական շրջանները, գրական հոսանքներն
 ու մտայնութիւնները կ'ըմբռնէ ու կը ներկայացնէ որպէս վիպասան: Ու ամբողջ 150
 տարին, 1800էն 1950 կեանքի կու գայ ու կը վերստեղծուին մարդիկ, հոգեբանութիւններ
 ու բարձրութիւնը պատմութիւնը կը վերածուի գրականութեան:

Ահա Օշականը, հիմնականին մէջ: Դեռ կարելի է խօսիլ անոր մասին որպէս ուսուցիչ
 որ սերունդներ պատրաստեց, որպէս թատերագիր իր 15 թատերախաղերով, որպէս էսսայիսթ
 իր երկու հատոր տպաւորապաշտ գրութիւններով, Օշականը որպէս Մարդ, եւ վերջապէս,
 Օշականը որպէս հայր...: Սակայն տեղը ու ժամանակը չէ:

Ուր է կապը Օշականի ու Հայ Մշակոյթի ժառանգութեան միջեւ:
 Կը խորհիմ թէ տօնել Օշականի ծննդեան 100ամեակը կը նշանակէ տօնել նոյն ատեն

մեր մշակույթի գեղեցկագույն առաքինութիւնները: Որովհետեւ մշակույթը գոր անցեալէն ժառանգած ենք, լեզու եւ արուեստ, կրօն, պատմական յուշարձաններ ու հայրենիք ըլլալէ առաջ՝ կը բիւրեղանայ "Հայ Մարդուն" բարոյական ու հոգեկան արժանիքներուն մէջ: "Մեր մշակույթի գերագույն յաղթանակը" կ'ըսէ Օշական, "մեր ժողովուրդին դիմանալն է: Բայց ոչ թէ դիմանալ գնչուի պէս մուրալով կամ բիրտ ուժով, հայհոյելով եւ ատելով: Այլ՝ ոգիի ուժով ու վեհանձնութեամբ, չարիքին դէմ բարիքով, հոգեկան արժանիքներով գորս Արիւնքը աւաղ, կորսնցուցած է, ինչպէս կ'ողբայ Օշական: Մեր ամբողջ մշակույթը ատոր կը ձգտի, հայ մարդուն տիպարը -- չարքաշ, ստեղծող, աշխատող, տաքսիրտ ու հայրենասէք, ուրիշին ցաւին հասնող, բարի ու ներող, քաջսիրտ ու յանդուգն, զգաստ ու հաւատաւոր: Այս տիպարն է որ Օշականի Համապատկերին ու հէքեաթներուն, Մնացորդացին ու Հաճի Մուրատին մէջ, հազար թերութիւններու մէջէն լուսարձակի տակ կ'իյնայ: Ու այս տիպարը ինքը, Օշականն է:

Իսկ զուտ արուեստի գետնի վրայ, Օշականը կը կայնի հինին ու նորին փոխանցման գետնին վրայ: Հազարաւոր տարիներու ժառանգը կ'առնէ ու մեզի կու տայ աւելի շքեղացած: Իր վիպակները, իր քննադատութիւնը, մանաւանդ իր վէպերը ամբողջութեամբ կ'իւրացընեն անցեալի գրական աւանդը, կը խորացնեն, կ'արդիականացնեն, կը բարձրացնեն յաճախ համաշխարհային մակարդակներու ու կը փոխանցեն մեզի: Իրմով կը բացուի մեր նոր վէպը, քննադատութիւնը: Շահան Շահնուր, Շաւարշ Նարդունի, Նիկողոս Սարաճեան, Վահէ Վահեան, Մուշեղ Իշխան, Անդրանիկ Մառուկեան, Եղիվարդ Օշականին գործին մէջէն է որ կը ժառանգեն մեր մշակույթը: Ինքն է նաեւ մեր առաջին զուտ, ամբողջական գրագէտը, մանաւանդ հայ գրագէտը: Ըմբոստ, անկախ իր ՔՅՑՔԱ կեանքին հանդէպ անսահման սէրը, աշխատանքի կիրքը, ազգին պաշտամունքը, ողբերգականութիւնն ու իմաստութիւնը այս ամբողջը՝ ուղիղ անցեալէն կու գայ, իրմով պահ մը կը բիւրեղանայ, օրինակի կը վերածուի ու գէպի ապագայ ճամբան ցոյց կու տայ: Ամէն մարդ Ասգատ է այդ ճամբուն հետեւելու կամ ոչ: Բայց այն անձը որ կ'ուզէ գիտնալ իր մշակույթին ու հայ ժողովուրդին վերապրելու գաղտնիքը՝ պիտի դառնայ Օշականի գործին, կեանքին ու հոն գտնէ այդ գաղտնիքը: Եւ այդ արժանիքին համար է որ այսօր կը տօնենք իր ծննդեան 100ամեակը:

Վահէ Օշական
Հոկտ. 1, 1989 Ռէտնոր

Julius Ozulka

—

3/11/8.

Answer to your advertisement.

My dear Sir,
I have the pleasure to acknowledge the receipt of your letter of the 11th inst. in relation to the matter mentioned therein.

I have the pleasure to inform you that the same has been forwarded to the proper authorities for their consideration. I am, Sir, very respectfully,
Yours truly,
[Signature]

I have the pleasure to inform you that the same has been forwarded to the proper authorities for their consideration. I am, Sir, very respectfully,
Yours truly,
[Signature]

we must have of us 1-2000 for the first time
1870 44-45 and we must have 1000
1871 45-46 and we must have 1000
1872 46-47 and we must have 1000
1873 47-48 and we must have 1000
1874 48-49 and we must have 1000
1875 49-50 and we must have 1000
1876 50-51 and we must have 1000
1877 51-52 and we must have 1000
1878 52-53 and we must have 1000
1879 53-54 and we must have 1000
1880 54-55 and we must have 1000

we must have of us 1-2000 for the first time
1870 44-45 and we must have 1000
1871 45-46 and we must have 1000
1872 46-47 and we must have 1000
1873 47-48 and we must have 1000
1874 48-49 and we must have 1000
1875 49-50 and we must have 1000
1876 50-51 and we must have 1000
1877 51-52 and we must have 1000
1878 52-53 and we must have 1000
1879 53-54 and we must have 1000
1880 54-55 and we must have 1000

110 102



500

1.1.

— 258

1400 = 1000 400

Wholesale. Wholesale = 728 225

— 2500

• 3000

4207

Servo